«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Անի Վարդանյան

Մանկապարտեզ՝ «Ծովագյուղի» մանկապարտեզ **ՀՈԱԿ**

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

1.ԳԼՈՒԽ ԾԵՍԸ, ԾԻՍԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ----9

2.ԳԼՈՒԽ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ----------12

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆԸ----------14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային ծեսերն ու տոները երեխայի ընտանիքի և համայնքի կյանքի կարևոր ու պարբերաբար կրկնվող երևույթներն են: Երեխան դրանց առնչվում է նույնիսկ մինչև մանկապարտեզ գալը և անկախ դրանից: Ծեսերի և տոների ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, որոնք նույնիսկ նպաստում են երեխայի խոսքի զարգացման հարստացմանը: Ծեսերը և տոները այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն ազատ խաղալ կամ ունենալ դերային խաղեր: Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն: Մեր կատարած հետազոտական աշխատանքի նպատակն է նախադպրոցահասակ երեխաներին ծանոթացնել ազգային ծեսերին և տոներին: Շեշտը դնում ենք ամանորի անցկացման ընթացակարգին՝ զարգացնելով երեխաների խոսքը և սոցիալական հմտությունները:

Հետազոտական աշխատանքի վարկածը մեր այն ենթադրությունն է, որ տոների անցկացման ընթացքում ներգրավվեն շատ խաղեր, երգեր և պարեր, ապա ավելի արդյունավետ կլինի երեխաների խոսքի և սոցիալական հմտությունների զարգացումը: Այն ունի ներածական մաս, երկու գլուխ, տեսական մաս, պլանի ձև և եզրակացություն:

Առաջին գլխում անդրադարձել եմ ծեսերին և նրանց տեսակներին. ինչ է իրենից ներկայացնում ծեսը և ինչ կարող է սովորել ծեսի կամ տոնի միջոցով:

Երկրորդ գլխում ներկայացված է տոնի գործնական մասը:

Նպատակը՝ երեխաների մոտ զարգանա սեր դեպի բնությունը, որը նպաստում է երեխաների անկաշկանդ լինելուն՝ զարգացնելով իրենց կարողունակությունները և կիրառելով իրենց գիտելիքները և հմտությունները, որը կնպաստի պահպանել երեխաների միջոցով ծեսերի և տոների ավանդույթները: Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի նկատմամբ: Այստեղ է, որ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները:

Հայ երեխայի բարության ու առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է: Հայ երեխային անհրաժեշտ է

հայեցի կրթություն ու դաստիարակություն և մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար: Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը և ազգային տոները: Մենք հայերս մեր հիշողության, մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն: Մենք պետք է ուժ առնենք մեր ազգային արժեքներից՝ նրանցից վերցնենք լավագույնը, ազգային մտածողության շարժառիթներն ու ուղենիշները: Երեխաների աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Երեխաների գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության գործում անգնահատելի նշանակություն ունեն ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք հոգեհարազատ են երեխաներին, քանի որ այս դեպքում նրանք դառնում են մասնակից և կատարող: Ազգային արժեք են նաև ծեսերը:

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի կրոնում, կենցաղում: Այն խորհրդանշական ձևերով վերարտադրում է ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում է ազգի, ժողովրդի միասնականությունը: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնությունների: Այս գործում մեծ ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչ և Ներսես Մեծ կաթողիկոսները:

Հայոց ազգային տոներն ու ծեսերը տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ են ունեցել: Սակայն այդ տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչ

օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ ու յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Ժողովրդի մեջ տոները նշելու ձգտումը շատ մեծ է, և տոնը ոչ թե հայտարարված տոնական օրն է, այլ՝ այդ օրվա բովանդակությանը և ժողովրդի մշակութային նորմերին համապատասխան տոնածիսական արարողակարգը: Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ: Այդ տոներից են՝ Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Համբարձումը, Վարդավառը: Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին անձրևաբեր և անձրևախափան ծեսերը՝ որպեսզի կարողանային ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները:

Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդե-սերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը ու ազգային առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի և կենցաղի վրա: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծեսերը անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս

որպե՛ս ստեղծագործ, որպե՛ս գործիչ, որպե՛ս քննադատ Ա. Կ. Գեղամյան, (Ծեսը, ծիսակարգը և սովորությունը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ): Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող:

Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Այն ծեսերը և տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս 100 տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղերում (մասնավորապես Գեղարքունիքի մարզ), մասամբ նշում են Համբարձումը, իսկ Զատկի, Տյառնընդառաջի, Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտամունքին նվիրված հանդիսություններ: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձևավորման շրջանից և պատմության ընթացքում ձևափոխությունների ենթարկվելով մինչև այսօր հնարավորություն են տալիս վերլուծել և թափանցել մեր մշակույթի վաղնջական շերտերը:

ԱՄԱՆՈՐ

Հունվարի 1-ին տարին սկսելու և Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը հայերի մեջ ընդհանրացել է ոչ վաղ անցյալում: Տոնի անունները հայոց մեջ տարբեր էին՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ:

Նոր տարվան նախորդող գիշերն էլ հայտնի էր Լոլեի գիշեր, Իզվլիկ, Գոտեկախ անուններով:

Նոր տարվա նախապատրաստությունները ուտելիքների շուրջն էին: Տոնի ժամանակ օգտագործվող ուտեստի տեսականին, դրանց ծիսական բնույթն ընդհանուր առմամբ նման էին շատ ազգագավառների համար: Նոր տարվա տոնական խնջույքն սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Շատ տեղերում այդ օրն այցելություններ չէին լինում, սակայն այդ օրը ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Նոր

տարվա սովորություններից կարելի է առանձնացնել նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան տղաների և աղջիկների խմբերի ծիսական շրջայցերը և տոնը շնորհավորելու ավանդույթը: Խմբերը պարելով շրջում էին փողոցներում և որևէ մեկի տանը մոտենալիս սկսում էին երգել: Երգերի տեքստերը պարունակում էին բարեմաղթություններ, ընտանիքի անդամների գովք: Մանկապարտեզում Ամանորյա տոնակատարությունը հատուկ տեղ է գրավում տոների շարքում: Այն երեխաների ամենասիրված տոներից մեկն է: Երեխաները մեծ ոգևորությամբ են պատրաստվում տոնին, բոլոր երգերը, պարերը սիրով են կատարում եւ մեծ ոգևորությամբ: Ամանորի նախաշեմին երեխաները պատրաստում են թեմատիկ զարդարանքներ, բացիկներ, որոնցով զարդարում ենք դահլիճը: Պատրաստում են բամբակյա ձնագնդիներ, որոնցով հաճույքով խաղում են միջոցառման շրջանակներում:

ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողը ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի, տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների, մեծահասակների հետ, և սխալ կլինի մտածել, թե երեխայի խոսքը կարելի է զարգացնել միայն խոսքի զարգացման հատուկ պարապմունքների ժամանակ, կամ երբ հատուկ ուշադրություն ենք դարձնում նրա խոսքին: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն էլ այն է , որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում:

Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են: Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ:

Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի ու գործողությունների մասին անհրաժեշտ տեղեկություն է հաղորդում։ Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը։ Երեխան իր գործունեության բոլոր տեսակների զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի։ Այս ամենը բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը։ Նախ նշենք, երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով։Այդ իսկ պատճառով ծեսերի և տոների իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան։

Ներկայացնենք, թե ծիսական գործողությունները ինչպես են ազդում երեխայի խոսքի, ինչպես նաև խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական, մտավոր զարգացման վրա։ Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին։ Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է։ Այս ընթացքում երեխաները խոսում են տոնի մասին։ Նրանք իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել (այսինքն խաղալ) այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ։ Հենց այն ամենը շատ մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքին նպաստող՝ սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա։

1.ԳԼՈՒԽ

ԾԵՍԸ, ԾԻՍԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՒԹԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

ԳԵՂԱՄՅԱՆ Ա. Ա.

Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերընդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Պատմության ընթացքում կազմավորվել են մի քանի այդպիսի միջոցներ կամ ձևեր: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բնույթ:

Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսից դուրս չի կատարվում ո՛չ մոգական գործողություն, ո՛չ կրոնական պաշտամունք: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Օրինակ՝ հայոց ավանդական կենցաղում բավական տարածված են խնձորի հետ կապված ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում են Վարդավառին: Տոնի մասնակիցները խնձոր են խորովում և խորոված խնձոր բաժանում: Տոնակատարության ողջ ընթացքում խարույկը վառվում է: Պարերը կատարվում են կրակի շուրջը: Մոխրի մեջ դրված են խնձորներ,

որոնք պետք է խորովվեն մինչ լուսաբաց: Լուսաբացին արևի առաջին ճառագայթների հետ խարույկահանդեսը վերջանում է արշալույսը ողջունող երգ-խմբապարով, օրինակ, հետևյալ բովանդակությամբ.

Վարդ է բացվել առավոտյան խաղերով,
Իմ յարն այգում վարդ է քաղում մաղերով,
Վարդ է բացվել Վարդավառի կիրակին,
Քու սերն ընկել է իմ սրտի պուրակին...

Արշալույսին արդեն ակնհայտ է դառնում, թե խմբերից որին՝ աղջիկների՞ն, թե՞ տղաներին հաջողվեց հաղթել: Հաղթանակը որոշվում է սրամտությամբ, ասորիները իրենց անասունները տանում էին աղբյուրի մոտ, մեկական ոչխար մատաղ անում, ինչպես նաև սրբազան ջրից ցանում հոտի վրա: Թարմ և չոր մրգերի և առանձնապես խնձորի առատ օգտագործումը ամուսնական ծեսի ընթացքում բացատրվում է այդ արգասաբեր հատկանիշները մոգական ճանապարհով նորապսակներին հաղորդելու ժողովրդական հավատալիքով: Այդ առումով ուշագրավ է նաև գրեթե բոլոր շրջաններում տարածված հարսանյաց կամ կենաց ծառ ստեղծելու և խնձորով զարդարելու սովորույթը: Ագուլիսում և դրա շրջակայքում «թագաւորի ծառը զարդարելու ժամանակ… Առաջինը մոտենում է քաւորակինը և նվիրում մի խնձոր՝ վրան զարկած գոյնզգոյն թելերով զարդարուն փոքրիկ խաչ, որ կոչւում է ջղան»:
Քավորակնոջ նվիրած խնձորը երբեմն գնահատվում էր որպես մի ամբողջ կարողություն. «...քաւորկինը սանահոր համար մի խնձոր է բերել, ջղան վրէն, հայով, հոյով, նորա մարդը ինչ որ աշխատել է մալով, մարդով, տուէլ է էս մի խնձորին, որ կարձէ Խոյ, Խորասան, Հինդ, Հնդաստան...»:

Խնձորը օգտա-գործվել է նաև որպես հրավերք հարսանյաց հանդեսի ժամանակ. «Խնձոր ա-ռած ազափբաշին հրաւիրում է քաւորին և քաւորա-կնոջը...»: Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում տարածված հարսանյաց սովորույթների և ծիսական արարողությունների ժամանակ օգտագործվում են պտղաբերության խորհրդանիշ համարվող զանազան մրգեր, որում իր ուրույն տեղն ունի խնձորը: Հատուկ ուշադրության է արժանի հարսանիքի ժամանակ խնձորի՝ որպես սիրո և պտղաբերության աստվածությունների հիմնական խորհրդանիշի ծիսական կիրառումը:

Բաղեշում, աղջկան այցելած տղայի մայրը կամ բարեկամուհին, հավանելու դեպքում մի կարմիր խնձոր էր դնում նրա ափը, որը, նրան յուրային դարձնելուց բացի, նաև համարվում էր արգասավորության նշան։Վ. Գրաֆսկու պնդմամբ՝ «իրավունքի պատմությունից հայտնի է, որ իրավունքի ամենասկզբնական եւ ամենահին աղբյուրը եղել է սովորույթը, իսկ իրագործող հետեւանքը՝ սովորութային իրավունքը»։ Որքան հին է սովորույթը, նույնքան մեծ է նրա հեղինակությունը հասարակականհարաբերություններըկարգավորելիս։ Հեղինակությունը ենթադրումէնաեւպահպանողականություն, կայունություն։ V դարի ականավոր հայ մտածող, պատմիչ Եղիշենիր «Վարդանի եւ հայոցպատերազմի մասին» երկում սովորույթի ուժի մասին գրումէ. «Նախնիներից սովորույթունենք՝

2.ԳԼՈՒԽ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ես իմ հետազոտության ընթացքում խոսել եմ տոների, ծեսերի, նրանց առանձնահատկությունների և կազմակերպման մասին: Առանձնացրել եմ Ամանորը: Խոսել եմ Ամանորի մասին և պարապմունք եմ անցկացրել Միջին խմբում « Ամանորը մանկապարտեզում» թեմայով: Պարապմունքը անցկացրել եմ երեխաների և Ձմեռ պապիկի հետ: Պարապմունքը կազմված է ԽԻԿ համակարգով: Պարապմունքի ընթացքում օգտագործել եմ՝ կանխազգուշակման մեթոդը և կշռադատման փուլում օգտագործել եմ '"խոսող փայտիկներ" խաղը:

ՊԼԱՆ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ՝ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԹԵՄԱ՝ «Ամանորը մանկապարտեզում»

ՆՊԱՏԱԿ՝ Փորձարկել ազգային տոնի ծիսակարգը, և այդ գործընթացում երեխաները դրսևորեն իրենց խոսքի և սոցիալական հմտության կարողունակությունները՝ խաղերի,պարի և երգի միջոցով:

Անհրաժեշտ պարագաներ

Ձմեռ պապիկի գլխարկներ, Ամանորյա նկարներ, եղևնի, եղևնու խաղալիքներ, գունավոր փայտիկներ , ժամացույց :

Ընթացքը

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ՝ կանխազգուշակման մեթոդ

Դաստիարակ- Այսօր մեր պարապմունքը յուրօրինակ է: Մենք այսօր հյուր ու ենք: Նա գալիս է ,որ իմանա թթ դուք ինչպե՞ս էք դիմավորում ամանորը:

Երեխաները գուշակություններ են անում՝ ասելով իրենց սիրելի հերոսների անունները։ Ճիշտ գուշակելուց հետո լսվում էր երաժշտություն, դաստիարակի հրահանգով բոլորը ոտքի են կանգնում։

Ներս է մտնում ձմեռ պապը ։

Ձմեռ պապ_ Բարև ձեզ սիրելի երեխաներ ես եկել եմ ձեզ մոտ, որպեսզի հասկանամ թթ ինչպես էք պատրաստվում Ամանորին։

Դաստիարակ_ Դե ինչ երեխաներ եկեք զարմացնենք Ձմեռ պապիկին, թող նա իմանա թե մենք ինչքան բան գիտենք ամանորի մասին։

1. Ի՞նչ տոներ գիտեք։
2. Ե՞րբ են նշում ամանորը։
3. Ինչպե՞ս զարդարենք եղևին։
4. Ինչպե՞ս ենք զարդարում մեր խմբասենյակը։
5. Ինչպե՞ս եք նշում ամանորը ձեր տներում։

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Հագնել Ձմեռ պապիկի գլխարկներ, նստել կիսաշրջանաձև իսկ ձմեռ պապիկին նստեցնել եղևնու տակ նրա կողքին էլ դնել եղևնու խաղալիքները։

Առաջարկել երեխաներին հերթով մոտենալ վերցնել խաղալիքները ասել ոտանավորներ և երգեր։

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Դիմավորեցինք Ձմեռ պապիկին, արտասանեցինք ամանորյա ոտանավորներ և երգեր, դիմավորեցինք ձմեռ պապիկին , զարդարեցինք եղևնին։

Առաջարկեցինք խաղալ «խոսող փայտիկներ» խաղը։ Երեխաները շատ ուրախացան դիմավորելով ձմեռ պապիկի ։ Նրանց շատ դուր եկավ եղևնին զարդարելու գործընթացը։ Դժվարութնուն ունեցան արտասանելու ընթացքում։

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆԸ

Ծանոթացա Ծովագյուղի մանկապարտեզի Միջին խմբի դաստիարակ Անի Վարդանյանի պլանավորած պարապմունքի պլան-կոնսպեկտավորմանը:

Թեման՝ <Ամանորը մանկապարտեզում>,

Նպատակը՝ Փորձարկել ազգային տոների ծիսակարգը և այդ գործընթացում երեխաները դրսևորեն իրենց խոսքի և սոցիալական հմտության կարողունակությունները՝ խաղերի, պարի և երգի միջոցով: Պարապմունքի կառուցվածքը ճիշտ է պլանավորած ԽԻԿ մեթոդի հիման վրա: Նպատակը համապատասխանում էր ընտրված թեմային :

Ծովագյուղի մանկապարտեզի ՀՈԱԿ-ի տնօրեն Ջ. Սարգսյան

Մեթոդիստ՝ Անահիտ Նավասարդյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպիսով , ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումներ, ինձ համար կարևորեցի այն, որ՝

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Տեխնոլոգիական խնդրի հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը հաշվի առնելով իր խմբի երեխաների հոգեբանական առանձնահատկությունները և կարիքները: Ծեսն այն միջավայն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողունակությունները, հմտությունները, գիտելիքները: Սաները կարողացան անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեության ընթացքում լիիրավ մասնակցությամբ կարողունակություններ և հմտություններ ձեռք բերելով յուրացնել այդ գործընթացը: Կատարեցին նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, խաղերը:

ԶԱՐԴԱՐԵՑԻՆՔ ԵՂԵՎՆԻՆ:

Նախադպրոցական երեխաները կարողանում են կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած մտքերը: Ես կառաջարկեի մյուս դաստիարակներին ստեղծել ազգային ծիսական-տոնական միջավայր, որտեղ կարելի կլիներ զարգացնել երեխայի ստեղծագործական կարողունակությունները, երևակայությունները՝ բնական, ազատ, իրական գործունեությունների միջոցով, և ծեսը կամ տոնը խաղարկել ոչ թե մեկ տարիքային խմբում, այլ տարատարիք խմբերում , դաստիարակների, ծնողների հետ միասին: Քանի որ մեծերը ստեղծում են ծիսատոնական այնպիսի միջավայր, որտեղ երեխաները ունեն իրենց տեղն ու դերը , խաղում են ինչպես տոնական, այնպես էլ մանկական խաղեր, որոնք իրենց շատ սիրելի մասն է կազմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1.siranush.badishyan.wordpress.com <Սուրբ ծննդյան ավետիսներ, Ամանորյա խաղեր>

2.tevanyanseda.home.blog <Ազգային ծեսը որպես կրթական կամուրջ >

3.Լ. Սարգսյան <Խոսքի զարգացման պարապ-մունքները մանկապարտեզի կրտսեր 3-4 տարեկան խմբում>, Ուսումնամեթոդական ձեռնարկ , 4.<Զանգակ-97> ՍՊԸ 2015թ, էջ 60-65 :

5.Լ. Վիգոցկի <Տարիքային հոգեբանություն>